«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նաղիա Հաբեթյան

Ուսումնական հաստատություն՝ Ալ. Բլոկի անվան 122 դպրոց

Երևան 2023

Ներածություն

Արդի աշխարհն իր սրընթաց ու գլխապտույտ զարգացմամբ հարափոփոխ խնդիրներ է դնում հանրակրթության առջև՝ կարևորելով ժողովրդավարական, սովորողակենտրոն, տարբերակված ուսուցումը։ Վերջինիս նպատակը որոշակի կարողունակությունների, հմտությունների, սովորողի վերաբերմունքի, ինչպես նաև արժեհամակարգի ձևավորման զարգացումն ու կատարելագործումը պիտի լինի։

Նոր չեն կրթական բարեփոխումների, չափորոշիչների պահանջները, նոր են ձևակերպումները։

Կրթող ուսուցիչը միշտ է դաստիարակել իրեն ճանաչող, աշխարհը բազմակողմանիորեն ուսումնասիրող, վերլուծող, համադրող, սոցիալական հարաբերություններում համերաշխ, հանդուրժող, խաղաղասեր սովորողներ։ Միշտ է նպաստել ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը՝ ձևավորելով սեր հայրենիքի նկատմամբ, ազգային ու պետական շահի գիտակցում, արժևորելով մարդու կյանքն ու արժանապատվությունը, միշտ է ժողովրդին հասու դարձրել ճանաչելու հայ մշակույթը որպես մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչ՝ արժևորելով սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի, պետության դերը, ճանաչելով արվեստն ու գրականությունը, ձևավորելով մշակութային գրագիտություն ու ճաշակ...

Կրթությունը կենսակերպ է, ուսուցչի առաքելությունը՝ կրթելն ու անտարակույս, շարունակական կրթվելը։ Կրթությունը մեր անվտանգության մեծագույն երաշխավորն է... Այսօր առավել քան երբևէ մեր գոյի խնդիրն է դամոկլյան սրի պես կախվել մեր գլխավերևում։ Այսօր ավելի քան մոլորված ենք՝ ներկան հուսադրող չէ, ապագան՝ անորոշ։ Ո՞ր ենք գնում, ու՞ր ենք հասել, ո՞րն է մեր ազգային գաղափարախոսությունը։ Կրթության համակարգը դարձել է սոսկ սպառող։ Ուսուսիչ եմ. իմ առաքելությունը գիտակցում եմ, գրականության և հայոց լեզվի դասավանդմամբ պիտի ազգայինից համամարդկային արժեքներ զարգացնեմ, տարածեմ, ձևավորեմ ... առանց ազգայինի չկա համամարդկայինը... Մենք ամեն օր, ամեն ժամ հեռանում ենք մեր արմատներից, մեր տեսակից... Էսպես ու՞ր կհասնենք։

Արդեն քանի տասնամյակ է մեր հայացքը դրսում է. կյանքի իմաստավորումը (առավելապես նյութականի ելակետով) դրսի աշխարհին կապկելու մեջ ենք տեսնում. ազգային արժեքները օտարված են, չկա անգամ պետական ազգային գաղափարախոսություն: Մեզնից առաջ էլ նայել են դեպի Եվրոպա, Ամերիկա, բայց ոչ թե նմանակելու, այլ լույս որոնելու, լավագույնը տուն բերելու ձգտումով: Իսկ այդ լավագույնն այստեղ է՝ տանը՝ հայկական բարձրավանդակում. որոնած լույսը՝ հայոց Աստվածաշնչում՝ «Սասնա ծռեր» էպոսում:

Ըստ մեր Դիցասքի՝ քաղաքակրթություն տարածող երկիր է եղել Հայաստանը: Ըստ էպոսի՝ մեր տարածքում է զարգացել ու այստեղից է տարածվել երկրագործությունը, ձիաբուծությունը, մետաղագործությունը, այծաբուծությունը, աստղագիտությունը, տոմարագիտությունը: Աշխարհին իր քաղաքակրթությամբ է ներկայացել հայը, որը ինչպես Խորենացին է գրում, թվով փոքր էր, բայց գործերով՝ մեծ: Դեռ 12,000 տարի առաջ մեր երկրում երկրագործական հեղափոխություն ենք արել...

Ահա այստեղ են մեր ակունքները. այս մասին պիտի իմանա հայ պատանին՝ վաղվա մտածողը, այսօրվա բացահայտողը, որը պիտի փոխանցողը դառնա այս ամենի, փոխանցի գալիք սերունդներին՝ գնահատելով, պահպանելով այն ամենը, ինչ երկնել է հայի հանճարեղ միտքը:

Սույն հետազոտական աշխատանքիս ***առարկան*** գրականությունն է, ժողովրդական բանահյուսության բարձրակետի՝ «Սասնա ծռեր» էպոսի ուսումնասիրության գործընթացը հիմնական դպրոցում:

Նպատակները

•Նպաստել սովորողների մոտ ժողովրդավարության, ազատության, պետության գաղափարների վրա հենվող հասարակության զարգացման գիտակցմանը՝ ձևավորելով արժեհամակարգ, սեր հայրենիքի նկատմամբ:

•Ձևավորել աշխարհաճանաչության, հայրենաճանաչության, ազգային գաղափարախոսության գիտակցում:

•Դաստիարակել հայի տեսակը ճանաչող, ինքնությունը գիտակցող, մարդու կյանքն արժևորող սովորող:

Խնդիրները

Անցյալով կարելի է հաստատվել, բայց ապրել պետք է ապագայի պլաններով: Եվ փոխել ներկան, այսինքն՝

Հաստատվել՝ աշխարհաճանաչությամբ ճանաչել մեզ, մեր տեղն աշխարհում, մեր դերը մարդկության պատմության մեջ: Հայրենաճանաչությամբ հասկանալ՝ ինչու՞ է գալիքը տեսնելու դժվարությունն ամեն քայլափոխի խորացվում և ոչ պատահականորեն: Ինքնության ճանաչմամբ իմանալ ո՞վ է հայը, ո՞րն է նրա տեսակը, մեր էթնոսի որակական հատկանիշները:

Ապրել ապագայի պլաններով – հոգևոր հայրենիք կերտելու ծրագիր ունենալ: Այդ հայրենիքն արարելու երազանքն իրական դարձնել հայրենասիրությամբ, մարդասիրությամբ:

Փոխել ներկան – Որոնել հոգևոր այն ճանապարհը, որ տանում է իմաստասիրության ու իմաստաբանության: Ետ դառնալ փակուղի տանող ճանապարհից, չերկնչել խոչընդոտներից: Վերադառնալ մեր տեսակին. ապրել ծռի խենթությամբ և ոչ թե նենգ թշնամուն հաճկատար դառնալու հպատակությամբ:

Արդիականությունը

Էպոսը մեր ծագումնաբանությունն ու անցյալն է, որը մոլորակի հավերժական պտույտների հետ դառնում է մեր այսօրն ու կանխորոշում է վաղը: Այն մեր այսօրն ընկալելու, մեր սխալները հասկանալու, մեր ապագան տեսնելու բանալին է. ըստ էպոսագետների՝ փնտրվող այն բանալին, որ պիտի բացի նոր քաղաքակրթության դուռը, որ է Մհերի դուռը:

Այսօրվա դպրոցում, ցավոք, ազգային գաղափարախոսության ցանքս չկա, բնականաբար, վաղը քաղելու ոչինչ չենք ունենա...

«Սասնա ծռերը» ձևավորում է այնպիսի արժեհամակարգ, որն օտար է այսօրվա աշխարհին, բայց որը մեր գոյի, լինելիության գրավականն է՝ հավատամքից, հեթանոսականից մեզ ոչինչ չի հասել, այսօր հավաքական պետականամետ գիտակցություն չունենք: Մենք հզոր պետություն կարող էինք լինել, մինչդեռ...

Հայի գոյի հյուսքն է «Սասնա ծռեր» էպոսը, տիեզերագիտություն է, որի վրա աշխատելով մի քանի տասնամյակ, նոր քաղաքականություն կարող ենք մտնել:

Գլուխ Ա.

«Սասնա ծռեր» դյուցազներգությունը տիեզերավեպ է աշխարհաճանաչողության մասին, ազգային վեպ է՝ մեր անթվագիր պատմության, մշակույթի, հայրենաճանաչության մասին, ասք է մեր տեսակի քաղաքակրթության ակունքներում կանգնած հայի մասին և այն ճանապարհի մասին, որը տանում է դեպի հոգևոր հայրենիք։

Բանահյուսությունը մեր ծագումնաբանական հիշողությունն է։ Էպոսը՝ շարունակական բանահյուսություն լինելով, եթե անգամ ընդհատումներ էլ ունի, չի ավարտվում. էպոս ստեղծող ժողովուրդը ապրում է ու շարունակում իր ասքը ու պիտի անպայման տանի հոգու հաղթանակը։

Այսուհանդերձ, ի՞նչ է էպոսը՝ դյուցազներգությունը։

- «Այն ազգային հոգու աշխարհընկալման ճանաչողությունն է, Աստվածաշունչ՝ տիեզերքի, բնության, մարդու գոյության մասին։
- Ազգային հոգևոր ճանապարհ է դեպի տիեզերք։
- Իրեն երկնող ժողովրդի Գիրք Ծննդոցն է՝ հազարամյակների հեռվից մինչ այսօր։

Այո՛, մինչև այսօր, քանի որ դյուցազներգության կյանքը տևում է այնքան, որքան իրեն բանահյուսող ժողովրդի կյանքն է։ Քանի ապրում է ժողովուրդը, պահպանում է իր տեսակը և շարունակում է հոգևոր ընթացքը, ապրում է էպոսը։

- Էպոսը մեր մանկությունն է, մանկությունից մինչև այն ժամանակը, երբ իրեն երկնող ժողովուրդը ֆիզիկական կամ հոգևոր մահ է ապրում»։

Էպոս ստեղծելով՝ ժողովուրդը փորձում է բացահայտել տիեզերական անհունը, հասկանալ իր տեղն ու դերն այդ անհունում՝ կապ ստեղծելով երկրայինի ու երկնայինի միջև, ձգտում է մեկնել, ըմբռնել մարդու աստվածային գոյի իմաստը։ Թերևս հնագույն էպոսների ակունքները հավատի տաճարներում են եղել, հետագայում ազգային շունչ ու ոգի են ստացել ասացողների, տաղերգուների խոսքով ու երգով դարձել են առավել կենդանի։

Էպոսը միշտ արդիական է. այն քաղաքակրթությունների պատում է. անթվագիր պատում, ազգային էության վավերագիր։

Միջին դպրոցի սովորողը էպոսի հատվածներն ուսումնասիրելիս պարզաբանումներ է ուզում. ինչու՞ Սասնա, ինչու՞ ծռեր, ինչու՞ ճյուղեր, ինչու՞ չորս...

Սասուն տեղանունը չի սահմանափակում էպոսի աշխարհագրական տարածքը. Սա Սուն է (սյուն է, ահռելի է, բարձր է, ժայռ է) ամրոցի անունը զուգորդվում է Հայկական լեռնաշխարհի անվան հետ: Քանի որ էպոսի գործողությունները տեղի են ունենում Սասունում՝ հայոց լեռնաշխարհում, այստեղից էլ ամրոցի անունը ողջ Հայոց աշխարհի անունն է:

Ինչու՞ ծռեր – այսինքն՝ խենթ, խելառ էինք կոչվում խաբեբա ու անարդար աշխարհի համար մեր մաքրությամբ, ազնվությամբ, պարզությամբ: Չէ՞ որ արատավոր աշխարհը ճիշտ էր դիտում իր սխալ տեսակը ու զարմանում էր (ու զարմանում է) մեր շիտակ տեսակի վրա, ծիծաղում ու խենթ է համարում մեր տեսակը:

Հիշենք գառնարած Դավթի ծռությունը, երբ նրա գառների հոտին խառնվում են գայլ ու աղվես, արջ ու առյուծ... Սա նրա չճանաչելու կամ չհասկանալու հետևանքը չէ, հովվի՝ կրոնական յուրաքանչյուր հոգևոր առաջնորդի երազանքն է կամ խնդիրը՝ իր հոտում համերաշխ պահել բոլորին: Սա հանդուրժողականության հաշտության ու խաղաղության խորհուրդն ունի ոչ թե չիմացության կամ ծռության:

Այսօր էլ թող դաստիարակենք «ծուռ» սովորողներ, ծռեր, որոնք կմերժեն եվրոպական, ամերիկյան արատավոր արժեքները, թեկուզ միամիտ ու խենթ համարվեն: Թող սխալ ու թերի համարեն մեր բարոյական արժեքները. թող ծռի արժեհամակարգը ծռություն համարեն:

Հիշենք ևս մի դրվագ Դավթի բարոյական տեսակի վերաբերյալ. Ձենով Հովանի կին Սառյեն պարտադրում է Դավթին, որ լողանալիս Դավիթը ջուր լցնի վրան. Դավիթն ընդդիմանում է. բայց երբ ստիպված ջուր է լցնում, ձեռքով փակում է աչքերը, որ հորեղբոր կնոջ «ջանդաքը» չտեսնի: Սա եթե հայի տեսակի բարոյական տեսակն է շեշտում, օտարի, այլազգիի համար ծռություն է: Թող որ այդպես լինի:

Ինչու՞ ճյուղ. որովհետև դյուցազնավեպը մեր տոհմածառն է քաղաքակրթության իր չորս աստիճաններով. արմատները տասնյակ հազարավոր տարեկան են:

Ծառաբունը Գագիկ թագավորն է իր Ծովինարով ու Թորոս որդով. Ծովինարի զավակներով է ձևավորվում նախահեթանոսական քաղաքակրթությունը, որի

սկզբնավորողն աշխարհում հայն է եղել։ Երկրորդ ճյուղը քաղաքակրթության մի նոր որակ է բերում։ Արդեն երրորդ ճյուղը քրիստոնեական հավատքի մի նոր աստիճան, մի նոր բարոյախոսություն ու արժեհամակարգ է բերում։

Ըստ իս՝ հիմա երրորդից չորրորդ ճյուղ անցման շրջանում ենք ու նոր քաղաքակրթության շեմին։

Իսկ այսօր ինչպիսի՞ն է իմ, քո, մեր տոհմածառը.

«Նման ենք այն բերքաբեր ծառին, որի ճյուղերը՝ քաղցրահամ պտուղներով ծանրաբեռ, // մշտապես հարևանների ցանկապատից անցել // և մինչ օրս թափվում են առատորեն նրանց բակերում։ // Բերքերս հավաքող ձեռքեր չկան, // ցանկապատն էլ առաջ տանելու հնար չկա, // իսկ հարևաններն ամեն պահ կարող են կացնահարել ճյուղերս. // Այգուս հողերում միայն բունն է մնացել՝ պտուղները՝ դրսում» (Հ. Սարգսյան)։

Ծառարմատը խորն է, ծառաբունը՝ մտահոգ իր ճյուղերի համար. ճյուղերի կյանքը՝ վտանգված, պտուղները՝ օտար հողում սփռված։

<u>Եվ ինչու՞ չորս ճյուղ</u>։ Չորս թիվը հնում համարվում էր սուրբ և կատարյալ թիվ։ Այն բնության չորս տարրերն է բնորոշում՝ հող, ջուր, հուր, օդ։

«Ըստ հնագույն պատկերացումների՝ տիեզերքի արարչագործության սկզբում ջրերի կարևորությունը առանձնահատուկ է.

«... Աստծո հոգին շրջում է ջրերի վրա»։ Հին կտակարան

«Ներքին ջրերը ողողում են քառսը»։ Շումերական տարբերակ

«Երկնեց ծովը ծիրանի...»։ Հայկական տարբերակ

Ջուր տարերքի պաշտամունքը և աստվածացումը ամենահնագույնն է։ Միջագետքի հնագույն ժողովուրդների մոտ Ջուր տարերքի պաշտամունքային աստծո անունը Հայա էր, առավել ուշ շրջանում՝ Էա (K. Kramer, “The ancient civilization”, 1963, Ս. Եսայան, «Նորից Վիշապաքարերի մասին», «Բանբեր 1985, N2»։) Այս աստծո պաշտամունքային կոթողները բարձր լեռներում տեղադրված վիշապաքարերն են (մ.թ.ա. 4-րդ հազարամյակ, Գեղամա լեռներ)։ Այս պաշտամունքի օրրանը Հայաստանն է. և ջուր տարերքի Հայա անունով աստվածությունը դարձավ այդ տարածքում բնակվող բնիկների ցեղային աստվածը, որի անունով ժողովուրդն անվանվեց հայ։ Հայկ նահապետի անունը ևս գալիս է Հայ- Հայա ջրային աստվածությունից, և այս դեպքում

Հայկը Հայ + իկ-ն , որը նշանակում է մեծ հայ, քանի որ իկ վերջածանցը հնում գործածվել է գերադրական մեծության իմաստով (Ս. Եսայան «Նորից վիշապաքարերի մասին». 1985թ., Բանբեր N2)։

… Ի սկզբանե հայ ժողովուրդը Ար-մեն (հուր) և Հայ – ա (ջուր) տարերքների խորհրդապաշտության իմաստավորումից է գալիս (Արմեններ – արևորդիներ. արև, արդարություն իմաստավորումն է)։ Այսինքն ի սկզբանե հայ ժողովուրդը Ար-մեն (հուր) և Հայ – ա (ջուր) տարերքների խորհրդապաշտության սիմվոլ – մոնումենտները ձկան մարմնով (ջուր) և խոյի սպիրալաձև եղջյուրներով (արևի սկավառակ) վիշապաքարերն են (4-րդ հազարամյակ մ.թ.ա Գեղամա լեռներ)»։

Էպոսի հերոսները ջրի և հրի կնունքն ունեն, ջրային ծագումով հրեղեն էակներ են։

Դիցասք, այսպես է ներկայացնում Արթուր Արմինը մեր էպոսը՝ այն համարելով հնագույն հեթանոսական Աստվածաշունչ։

Գլուխ Բ.

«Մշակույթը արկածախնդրություն է, վսեմ մի խնդություն, որով տիեզերքը գալիս գտնում է իր իմաստը» (Կ. Զարյան)։

Հոգևորն արարող տեսակ է հայը։ Մեր նախնիները նայել են երկնքին ու հայտնագործել են ժամանակը։ Ժամանակի միավորային և հարատևության պատկերացումները գալիս են հնուց ու արդիական են։

«Սասնա ծռեր» էպոսը բերում է տիեզերական ճանապարհի ուղերձը (դեպի տիեզերքը Ամենտի), երկրայինի ու երկնայինի հատման կետում մարդն է, որը հողեղեն լինելով (էպոսում՝ ջրածին. իսկ ջուրը երկրի արյունն է)՝ հավերժ դեպի երկնայինն է ձգտում, դեպի լույսը (լույսը երկրի հոգին է)։

Պիտի ապրես ճանապարհի փիլիսոփայության օրենքով։ Ճանապարհ, որ տանում է դեպի ճշմարիտը։ Հայերիս մոտ ասվում է. «Բոլոր ճանապարհները տանում են տաճար», տանում են դեպի հոգևորը. էլ ինչ ճանապարհ, որ չի տանում տաճար։

Հիշենք Հիսուսի խոսքը. «Ես եմ ճանապարհն ու փրկությունը»։

Մեր էպոսը ևս ճանապարհ է դեպի հոգևորը, դեպի տիեզերական իմաստասիրություն, որն ուղղորդում է մեզ՝ հայերիս։ Այլ բան է, թե ով ինչպես է ընկալում այն։ Մարդիկ կան (այդ թվում և սովորողների մեծ մասը) դիցասքը կարդալիս բարոյական չափանիշներ են ընկալում ու սովորում՝ բարին հաղթում է չարին... Նրա մոտ ձևավորվում է բարության արժեքը, առանց որի գոյություն չկա։

«Բարին բնածին է, ատելությունը՝ կամածին» (Եզնիկ Կողբացի)։ Բարին, բարյացակամությունը նույն ինքը Սերն է. սիրուց ծնվող խաղաղությունն ու ինքդ քեզ հետ, մյուսների հետ համերաշխ, ներդաշնակ ապրելու երաշխիքը։

Բարության, ժողովրդավարության դրսևորում է Սանասար, Բաղդասար եղբայրների կողմից այն,որ Սասնա բերդը կառուցելուց առաջ «աղքատ-ուղքատի տներն» են կառուցում. «Առաջ շինենք զէդոնց տներ // Ու նոր շինենք զմեր բերդ։ Էդ խեղճ մարդեր չեն կարնա // Արևուն առջև կենա...»։

Բարությունն ու հզորությունն է Մեծ Միհերին հանում առյուծի (ըստ իս՝ ներքին թշնամու) դեմ հաղթական կռվի՝ հանուն ժողովրդի բարօրության։

Բարությունն է Մեծ Մհերին տանում Մսըր՝ զորավիգ լինելու Իսմիլ Խաթունին, որն այրիացել էր (այս բարությամբ է Սասնա տան զորությունն անցնում թշնամուն. Փոքր Մելիքը՝ Մհերի որդին է կրում այն՝ դառնալով թշնամի)։

Բարությունն է, որ Արաբ ծերունու խոսքից հետո Դավիթին կռվի դաշտից հանում ուղղորդում է դեպի Մելիքի վրանը։ Կամ երեք զարկերից երկուսը բաշխում է խորթ մորն ու քրոջը։

Ասել կուզեք այս բարությունը միամտությու՞ն էր, ծռությու՞ն։ Սա տեսակ է, որակ, որ հավերժ կրել ու կրում է հայը։ «Ինչ-որ մեկը հայերին ազգերի Դոն-Կիխոտ է կոչել...»։

«Սասնա ծռեր» էպոսն ընթերցողների մյուս խումբը, որը որոշակի գիտելիքներ ունի, կարող է ընկալել ու բացել էպոսի այլաբանությունը, նորովի են ընկալում էպոսի ենթատեքստը։

Բարության արժեքին ավելանում է իմաստասիրության արժեքը։

Այլ ընկալում ունեն քրմերը, այսօր նրանց ունկնդիրներն ու գիտնականները։ Նրանց համար տիեզերաբանություն է էպոսը. նրանք մեր գոյի բանաձևերն են բացում՝ ուսումնասիրելով երկնային աստղատներն ու դրանց անդրադարձը մեր, մեր երկրի գոյի, տեսակի մասին։

Այդ պեղումներն են աշխարհաճանաչությունից, հայրենաճանաչումից բերում մարդուն (տվյալ՝ պարագայում՝ հային) ճանաչելու, բացահայտելու սեփական հոգին։

Այս դիցասքը ազգային հոգու աշխարհընկալման ճանաչողությունն է, այս դեպքում Աստվածաշունչ, որ շերտ-շերտ բացում է մարդ արարածի էությունը, նրա գոյի երաշխիքը՝ ըստ պատվիրանների։ Աշխարհը կառուցի՛ր, շենացրու՛, մշակի՛ր աստվածընծա երկիրդ, լույս արարի՛ր, հավատա՝ այդ լույսն է մարդ տեսակի զորավոր պահապանը, քո ներսում Առյուծ Մհերի՛ն, Դավթի՛ն կրիր, մի՛ ապրիր զոհի, խաչվողի ստրուկի հոգեվիճակով, ապրի՛ր արժանապատիվ, գնա ճշմարտության հետևից, հավատա աստվածային քո տեսակին, մարդասե՛ր եղիր ու կռիվ տուր մարդու երկիր արարելու համար (Սարոյանը կասեր՝ կռվի՛ր մարդու մեջ գազանին սպանելու համար)։

Դեռ մանուկ Դավիթը, Աստծո հրեշտակների զորությամբ, ոսկու փոխարեն կրակին է մեկնում մանուկ ափը։ Աստծո պատգամը հոգևորով առաջնորդվելու մեջ է, դեպի լույսը քայլելու մեջ է։ Թումանյանին հիշեցի՝ Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս։ Դեպի

այդ լույսն ենք գնում արդեն հազարամյակներով. դեպի վեր, դեպի երկնային կատարելություն։ Մեզ՝ հայերիս, վիճակված է ապրել բարձրավանդակի վրա։ Մեր դաշտերը, մեր լճերը մագլցում են դեպի լեռը. վա՜յ մեզ, եթե վար իջնենք. կընկնենք արի քաղաքականության ծխնելույզի տակ, մեքենայի մաս կդառնանք կամ խանութպան (որ ենք արդեն) (Կ. Զարյան)։

Հոգևոր երկնային լույսը ազատասիրության տենչն է. Դավթի՝ թշնամու թրի տակով չանցնելու կամքը, տոկունությունը, ազնվությունը (ո՞վ քնած է արթուն կեցեք, ո՞վ կեցել է, ձի թամբեցեք, Ձի եք թամբել, ելե՞ք, հեծնեք... հետո չասեք՝ Դավիթ եկավ գող-գող գնաց...)։ Հայի տեսակի ազնվությունն , որ առ այսօր աշխարհը ծռություն է դիտում։

Աստվածընծա սերն է այդ լույսը, որն էպոսում մարդասիրությունն է ու հայրենասիրությունը։

Այստեղից մի նոր արժեք՝ իմաստաբանություն, որի սիրահարն է եղել հայը (վկա՝ Դավիթ Անհաղթը), որից դարերով օտարվել է հայը ու այսօր, թերևս, ընդամենը բարության արժեքի կրողն է (հատկապես օտարի համար), որից ևս քիչ-քիչ հեռանում է։ Էպոսն ուսուցանելիս բավարար չէ, որ սովորողն ընկալի բարին հաղթում է չարին, լույսը հաղթում է խավարին։ Սովորողը պիտի հասկանա, ընկալի, որ մեր հերոսները՝ Սանասարը, Բաղդասարը, Մեծ Միհերը, Փոքր Միհերը, Ձենով Հովանը, Ցռան Վերգոն, Դավիթը, իրենք են այդ ճանապարհը, առնվազն հոգևոր ճանապարհով մեզ ուղեկցողը։ Նրանք իրենց տեսակով ծիսակարգ են հիմնում, որով պիտի ապրեն մյուսները։ Մենք մեր կյանքն ու կենցաղը պիտի ապրենք, որ համապատասխանեցնենք տիեզերականին։ Նրանց սահմանած ծիսակարգերը հուշում են հաց ուտելու, սեղան նստելու, բաժակաճառ ասելու, տուն կառուցելու ծիսակարգը։

Եթե ծիսակարգը չգիտես, գոնե ավանդույթը պիտի պահես ու պաշտպանես։ Գոնե... Հակառակ դեպքում՝ պիտի սովորույթներով ապրես. սովորույթները, սակայն, տանում են դեպի արատավորը, դեպի ապականում (այսպես ենք շրջանցում մեր ազգային արժեքները), տանում են դեպի կործանում։

Վատ արարքները վատ սովորույթներ են դառնում, վատ սովորույթները՝ վատ բնավորություն, վատ բնավորությունը՝ վատ (եթե ոչ ողբերգական) ճակատագիր։

Այսպես մարդու համար,

Այսպես ազգի համար

Էպոսը փրկության ճանապարհի բանալին է տալիս։ Կարդանք մեր էպոսը։

«Սասնա ծռեր» դյուցազներգությունը մեզ կտանի այն ճանապարհով, որը ուղենշում է հոգևորը՝ տիեզերական ճշմարիտը։

Տանում է տիեզերագիտությունից աշխարհաճանաչություն, աշխարհաճանաչությունից հայրենաճանաչություն, հայրենաճանաչությունից դեպի ինքնաճանաչություն։

Առանց հայրենաճանաչության չկա հայրենասիրություն։ Ճանաչենք մեզ էպոսի միջոցով։

Սասուն – սա սյուն

Սյունը **արևն է**, լույսը, լուսավորը։

Միերն է լույսն ու արևը, որ պիտի դուրս գա Ագռավաքարից։

Ուրեմն՝ արևապաշտ, խավարը մերժող ու լույս արարող է հայը, հայի տեսակը **(Երկիրը)**։

Ջուրը – երկնային ծիրանի ծովում բացված կաթնաղբյուրի ջրից են ծնվում Սանասարն ու Բաղասարը՝ Ջրի զորությամբ, ջրի մաքրագործող հզորությամբ։ Հիշենք՝ անգամ իրենց տուն ամրոցը հզոր առվի ակունքին կառուցեցին. առու, որ ճեղքում – անցնում էր գետը (**Ժողովուրդը**)։

Կրակը – Թուր կեծակին, որ ոչնչացնում է չարը, արատավորը (Չարենցին հիշեցի.

«Ինչ որ լավ է, վառում է ու վառվում,

Ինչ որ լավ է, միշտ վառ կմնա,

Այս արև, այս վառ աշխարհում

Քանի կաս, վառվիր ու գնա...)՝ տարածելով լույսն ու լուսավորը (**Կենսակերպը**)։

Հողը – Մեղավոր աշխարհին այլևս չի դիմանում հողը, այն հողը, որ սնում ու ապրեցնում է։ Մեղքերի ծանրությունից Միերը խրվում է հողում, հողը նրան չէր դիմանում. նա փակվում է Ագռավաքարում (**Նյութեղենը**), ոգեղեն՝ Միերը փակված նյութ կեղևի մեջ, որից պետք է դուրս գա որպես լույս։

Խաչ պատերազմին – հավատն է։ Մարդն ամենից առաջ ու ամենից շատ պիտի հավատա ինքն իրեն, իր ուժերին, պիտի ապավինի երկնային զորությանը, պիտի իր մեջ

կրի հզոր առյուծ Միերին, դիվանագետ ու կառուցող Սանասարին, անպարտելի Դավթին ու արևապաշտ Միերին՝ առաջ գնալով «Հացն ու գինին տեր կենդանի» երդմամբ ու հաղթելու հաստատակամությամբ (ի դեպ՝ ստուգաբանությամբ այս բառի աստ-ը Աստվածն է)։

Քուռկիկ Ջալալին – մեր վաղվա օրվա տեսլականն է, մեր երազանքը, երկնային բարձունքների հետ մեր կապը։

Գլուխ Գ.

Մեր էպոսը համամարդկային հենք ունի, հետո համամարդկայինից զատվում է ազգայինը՝ հայ ազգին բնորոշը, ապա կենտրոնում կանգնում է հերոսը՝ ազգային ինքնությամբ։ Ջրից ծնված, ջրի զորությամբ ու մաքրագործմամբ օժտված Սանասարը կրում է Թուր Կեծակին ու հեծնում մինչև արեգակ թռչող Քուռկիկ Ջալալին։ Կենսատու ջրերում է ձեռք բերում անխոցելի զենքն ու զրահը, բազկի վրա դրոշմվում է Խաչ պատերազմին։ Ե՛վ Սանասարը, և՛ նրան հաջորդող հսկաները գոյապայքար են մղում իրենց շարունակության համար։ Նրանք օժտված են գերբնական ուժով, ցասկոտ ու ազնիվ բնավորութամբ, չարը կործանելու, բարին հաստատելու վճռականությամբ։ Նրանք հորից որդի արյունակցական կապ ունեն, նրանց կռիվը անձնուրաց կռիվ է հանուն իրենց երկրի անկախության։ Արդի բարոյախոսության ակունքները այստեղ են էպոսում. օտար երկիրը, օտար հողը հայրենիք չի դառնա (- Աղբե՛ր, էստեղ մեզ տուն չիլնի // Երթանք մեր տուն շինենք // Էնքան ջանք թափեցինք էնտեղ // Ու մեր ավերակն էնպես մնաց կիսատ)։ Սանասարն ու Բաղդասարը նախ տներ են կառուցում իրենց մոտ բնակություն հաստատած ընտանիքների համար, հոգում նրանց սննդի, կենցաղի հարցերը, հետո միայն կառուցում են Սասնա ամրոց-տունը։ Տունը, որ երկիրն է հայոց, որն իր անունն ունի Սասնա տուն, քանի որ սուն էր, հզոր էր, ահռելի, ամուր և որի անունը իմաստուն ծերունին էր դրել։ Շինարար հայը այսօր էլ տուն է կառուցում (իր երկիրը՝ Հայաստան աշխարհը)։ Տուն-երկիրն իր ժողովուրդն ունի ու ժողովրդավար երկիր է, իր բանակն ունի, որ Թուր Կեծակին է, իր տեսլականն ունի՝ արեգակ-լույսին հասնելու. այն է՝ Քուռկիկ Ջալալին, իր եկեղեցին ու հավատն ունի, որ է՝ Խաչ պատերազմին...

Ահա այսօրվա երկիր ու հայրենիքն ունենալու մանրակերտը, որ տալիս են Սանասարն ու Բաղդասարը։ Տունն ընտանիք պիտի դառնա. ընտանիքն էլ հեշտ չի տրվում։ Սանասարը բանտարկված Քառսուն-ճյուղ-ծամի համար պիտի կռիվ տա վիշապի հետ։ Ընտանիքը բոլոր ճյուղերում սրբություն է ու տունը կանգուն պահելու կարևոր պայման։

Ահա այսպես ստեղծվեց Սասուն Հայոց աշխարհը։ Երկիր, որ ժողովրդավար էր, ազատ էր ու անկախ, հզոր էր և մարդասեր։ Եվ նորից մերօրյա բարոյախոսությունը. «Օտար երկիրը հայրենիք չի դառնա»։

Էպոսի մասին տարրական գիտելիքներ են տրվում դեռևս չորրորդ դասարանում (Թումանյանի պոեմից մեկ-երկու հատվածի ընթերցում)։ Դեռևս այս տարիքում աշակերտներին ներկայացվում է բարի, ազնիվ, արդարամիտ ու հայրենասեր Դավիթն իր ծռությամբ, միամտությամբ, քաջությամբ։ Դեռևս այս տարիքում ձևավորվում է բնավորության տեսակի չափանիշ, որ է՝ հայրենիքի համար կռվող ամենակարող Դավիթը, ում կցանկանա նմանվել, ում տեսակը շարունակողը պիտի դառնա ինքը՝ տասը տարեկան սովորողը.

«Ես անվախ թոռն եմ Սասունցի Դավթի,

Ինձ այս աշխարհում ոչ ոք չի հաղթի,

Շուռ կտամ սարը նեղություն տվող,

Բռիս մեջ կաղամ ձեռքերն ավիրող,

Ես Դավթի թոռն եմ, նրա պես ազնիվ, նրա պես բարի,

Ինչ որ չի արել իմ պապը հսկա,

Ես պիտի անեմ, արևս վկա»։

Այս փոքրիկ ոտանավորով են ճանաչում Դավթին, ապա տեսնում են նրան չարի դեմ կռվող քաջի, արդարամիտ ու հաստատակամ դյուցազնի կերպարով՝ ըստ Թումանյանի պոեմի հատվածի։

Նույն տարիքում աշակերտները նկարում են, նկարազարդումներ ու քանդակներ են անում, դերախաղով Դավիթ ու Մելիք են խաղում, Երվանդ Քոչարի կերտած արձանի մոտ զրուցում ու հիանում են Քուռկիկ Ջալալու և հաղթ Դավթի հոյակերտ քանդակով, դիտում և քննարկում են «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմը։

Արդեն միջին դպրոցում՝ սովորողները գրականության դասաժամին (իններորդ դասարան) հատվածներ են անցնում «Սասնա ծռեր» էպոսից (ինչպես է կառուցվում Սասունը, ինչպիսիք են էպոսի հերոսները՝ որպես հավաքական կերպարներ), ինչպես են ձեռք բերում Թուր-Կեծակի - զորությունը, որ բանակն է հայոց, Խաչ պատերազմին՝ որ հավատն է, Քուռկիկ Ջալալին, որ վաղվա տեսլականն է, ինչպես են ապրում

ժողովրդավար երկրում՝ կառուցելով, ժողովրդի իմաստուն կենսակերպով, սիրելով ու գնահատելով այն, ինչ ստեղծել են, այն, ինչ ունեն, մասնավորապես՝ հայրենիքը։ Բարության, ազնվության, հայրենասիրության խտացումներ են Սանասարի, Մեծ Միհրի, Դավթի, Փոքր Միհրի կերպարները, որոնք դաստիարակում են հայ մարդու տեսակ։ Ի՞նչ բնույթի աշխատանքներով պիտի այս ամենը հասու դառնա սովորողին։

Իններորդցիները տարաբնույթ աշխատանքներով յուրացրածը կդրսևորեն թե՛ նախագծային, թե՛ գործնական աշխատանքներով, թե՛ դերախաղերով, թե՛ կոլաժ պատրաստելով. կներկայացնեն էպոսը՝ ստողծելով տոհմածառ, թեստային աշխատանքների, խաղերի տեսքով, խաչբառների, հարցատուփերի միջոցով, սովորածն ամփոփող աշխատանքներով։ Կքննարկեն «Նմանվել Սասունցի Դավթին» գիրքը (հեղինակ՝ Վիկտորիա Վարդան. վերջինս դեռ չորրորդ դասարանում հանձնարարվում է արտադասարանային ընթերցանության նյութ), գրքի հիման վրա նկարահանված ֆիլմը։ Կպատրաստեն ճանաչողական խաղ-լոտո՝ էպոսը ճանաչելու, խաղի միջոցով դեպի արմատները գնալու, «վեհագույն» տեսակը պահպանելու նպատակով։

Միջին դպրոցում էպոսից ներկայացվող հատվածների ուսումնասիրությունից, մեկնաբանումից, բնութագրումներից հետո խիստ կարևորում եմ լրացուցիչ արտադասարանային ընթերցանության, էպոսի մշակումների (Թումանյան, Չարենց) ընթերցումն ու մեկնաբանությունը՝ կարևորելով ազգային գաղափարախոսության, հայրենասիրության, արժեհամակարգ ձևավորելու խնդիրները։

Բանահյուսության մասին տարրական գիտելիքներ տալով՝ նպատակս՝ դեռ մանկուց ճանաչել հայրենիքն ու հայրենիքի համար կռվող հային. դյուցազնին, որ զորեղ է, ազնիվ, զարգացնել քննադատական մտածողություն, կարծիք կազմելու, խոսքը հիմնավորելու հմտություններ, գնահատել ու պահպանել հայի տեսակն ու հայի հայրենիքը։ Նաև շփվելու արվեստի տարբեր տեսակների՝ կերպարվեստի, քանդակագործության, կինոյի, գրականության հետ՝ ի շահ հայրենաճանաչության և ինքնության գիտակցման։

Էպոսն ուսումնասիրելիս կարևորում եմ նաև էպոսի լեզուն, բառապաշարը, ոճը, աշխարհագրական, պատմական անունների ստուգաբանությունը, էպոսի ժանրային բնութագիրը՝ վերջիններս ներկայացնելով ազգային, հայրենասիրական

առնչություններով։ Մասնավորապես կարևորում եմ էպոսի լեզուն՝ ցույց տալու հայոց բարբառների գունագեղությունը, ժողովրդական բառ ու բանը։

Էպոսի ուսուցումը, կարծում եմ, ծրագրում պիտի նախորդի միջնադարյան պատմագրության դասավանդմանը, հատկապես Խորենացու Հայոց պատմության ուսուցմանը։ Վերջինս արդեն մեր թվագիր պատմությունն է, որի առասպելական հերոսները մարմնավորում են նույն Սասնա ծռերին։ Խորենացին ճիշտ էպոսի հերոսների պես Հայկից մինչև Արտավազդ վիպական կերպարներին ներկայացնում է գործողության մեջ՝ կառուցելիս, պետական կարգ հաստատելիս ու պատերազմելիս։ Ըստ իս՝ նույնանում են Սանասարն ու Հայկը, Մեծ Միհրն ու Արա Գեղեցիկը, Դավիթն ու Տիգրանները, Փոքր Միհրն ու Արտավազդը (վերջինս փակվում, շղթայվում է որպես չար, իսկ Միհրը որպես հոգևոր լույս՝ Ագռավաքարում)։

«Սասնա ծռեր» էպոսի գաղափարախոսությունը երբեք հնացող չէ, քանի որ այն ձևավորում է մերօրյա աշակերտի արժեհամակարգը, դաստիարակում է սիրել հայրենիքը, լինել աշխատասեր ու մարդասեր, չլինել հաճկատար, չենթարկվել բռնակալ ուժին, պահպանել հայ ընտանիքի ավանդույթները, ունենալ անկախ հայրենիք՝ խաղաղ գոյակցելով աշխարհի այլ ժողովուրդների հետ։ Էպոսի հյուսքը հայոց հող ու ջրի, հայի ոգու հայկականությունն է։

Խորենացու առասպելներում միահյուսվում են պատմականն ու առասպելականը։ Գործում են երկու հակամարտ կողմեր՝ ուժեր։ Այդ ուժերը ներկայացնում են 2 տիտանական կերպարներ՝ ընդգծված դրական և բացասական հատկանիշներով։

Ի տարբերություն էպոսի դյուցազունների՝ վիպական անհատները միայն աստվածացված կուռքեր չեն։ Նրանք օժտված են որոշակի մարդկային գծերով։

Մելիքը նույն ինքը Բելն է, Շամիրամը, Աժդահակը, ալանները։ Արևապաշտ էինք, հայ – սա «Սանասար և Բաղդասար» ճյուղն է։ Հեթանոս, կռապաշտ էինք, սա «Մեծ Միհր» ճյուղն է։ Քրիստոնյա էինք (ենք), սա «Սասունցի Դավիթ» ճյուղն է։ Նոր գաղափարախոսության կարիք ունենք՝ Չարին դիմակայելու, ընդդիմանալու և մարդանալու, սա «Փոքր Միհր» ճյուղն է։

Չորսն էլ աշխարհաճանաչության, տիեզերաճանաչության, մարդկության սկզբնավորման և մարդանալու ճանապարհին փորձություններ հաղթահարելու դասեր

են տալիս։ Երկիր մոլորակի հավասարակշռությունը կարծես պահում է չարի և բարու հակամարտությունը։ Վա՜յ երկրին, եթե չարը հաղթի՝ կործանի։

Եզրակացություն

21-րդ դարի կրթող ուսուցիչն այսօր էլ շարունակում է ուսուցանել ու դաստիարակել՝ ձևավորելով արժեհամակարգ, ուր ոչինչ չի փոխվել։ Կրթությամբ՝ սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ։ Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ ձևավորվում է դաստիարակության միջոցով։

Կրթության բարեփոխումներ... արդեն որերորդն է... (մանկավարժական գործունեությանս մոտ 40 տարին եմ բոլորում). ի՞նչ են տալիս այդ բարեփոխումները, որոնք առավելապես անուններ ու ձևեր են փոխում (նմանակելով Արևմուտքին), իսկ բովանդակային առումով ազգայինից հեռանում ու հեռանում ենք։ Հեռանում ենք, քանի որ նախնյաց մշակութային արժեքները խորթ են դառնում, օտար, դրանք չգիտենք, ուր մնաց թե պահպանենք։ Առաջ նայել դեպի արևմուտք չի նշանակում արհամարհել ազգայինը։ Ե՛տ նայենք, հանուն մեր տեսակի, մեր հավատի, մեր վաղվա համար դարավոր գոյակռիվ ենք տվել, արյուն ենք հեղել...

Այսօր արդեն արնաքամ լինող Արցախ ու սեփական դիմագիծը կորցնող Հայաստան ունենք։ Արարատին պատասխան ունենք տալու...

Հայրենիքս հոգեվարք է ապրում. Հայրենիքս, ոչ՝ պետությունը։

Հայը կորցրել է իր տեսակն ու անտարբեր է Մայր երկրի հոգեվարքի նկատմամբ...

Ի՞նչ անել. ինչպե՞ս հայ մարդուն վերադարձնել նախնյաց կերպարին, ինչպե՞ս վերակերտել։ Ուրիշ արժեքներ են հրապուրում հայ պատանուն, մեր ազգային, մարդկային արժեքները, բարքերը շարունակում են անկում ապրել. ամենուր ատելություն, նախանձ, չարակամություն...

Հանրակրթության, մասնավորապես ուսուցչի դերը անչափելի է այս ամենը շտկելու, սովորողին հայ մարդ կրթելու խնդրում։

Ինչպես նշեցի, արժեհամակարգ ձևավորելու, հայրենասիրություն դաստիարակելու գերխնդիրը իմ սույն հետազոտության նպատակն է։ Ոչ թե խնդիր, այլ գերխնդիր եմ գրում, քանի որ դասավանդում եմ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում, ուր սովորողների 95%-ը հայեր են. ճակատագրի բերումով իրենց տեսակն ու Հայաստանը

չճանաչող, հայերեն չիմացող (շատերը տառաճանաչ են դառնում 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, անգամ 9-րդ դասարանում։ Ոմանք երանությամբ բացահայտում են իրենց, ոմանք հեգնանքով զարմանում են, թե ինչու՞ պիտի հայերենը՝ այս երկրի պետական լեզուն, պարտադրվի իրենց)։ Հայաստանաբնակ պատանին հաճախ չգիտի, չի ճանաչում իր արմատները, ուր մնաց՝ հանգամանքների բերումով Հայաստանում հայտնված, օտարի հոգևոր հանդերձով (երբեմն դա էլ չկա) պատանին։ Դասավանդում եմ հիմնական դպրոցում. 9-րդ դասարանում ուսումնասիրում ենք Սասնա ծռեր էպոսից հատվածներ միայն։ Սասնա ծռեր էպոսն ուսուցանելիս ռուսերենով ուսուցմամբ դասարաններում չեմ հաջողում, քանի որ բազմաշերտ ուսուցմամբ պայմանավորված աշակերտների գերակշիռ մասը հայերեն կարդալ, գրել դժվարանում է, հայերենից տարրական դպրոցի գիտելիքներ է ստանում։ Երիտասարդության դաստիարակության դպրոց է «Սասնա ծռեր» դյուցազներգությունը։ Այն Հայաստան աշխարհի աստղագիտական, տիեզերական քարտեզն է։ Դիցապատումը հրաշալի դասեր է տալիս՝ ձևավորելով արժեհամակարգ՝ մարդասիրություն (մարդկության գոյի հիմքը), ժողովրդավարություն (հանուն բոլորի բարեկեցության), առաքինություն, բարոյականություն (սա հայի համար միշտ անհամատեղելի մնաց քաղաքականության հետ), բարություն, բարյացակամություն, հանդուրժողականություն (սրանցից երբեք չխռովեց հայը), իմաստնություն (միակ ճանապարհը, որ պիտի խաղաղության տանի), խաղաղասիրություն, աշխատասիրություն (շինարար ոգին. ստեղծող, արարող, ոչ առևտրականի), իմաստաբանություն, (գաղափարախոսություն, որն ազգայինի շրջանակում չմնաց, ծավալվե՞ց...), ազատասիրություն (թշնամու թրի տակով չանցնելու կամք ու տոկունություն), ազնվություն (որը նենգ աշխարհը ծռություն է համարում), հայրենասիրություն, որը հայի համար պաշտամունքի է հասնում՝ գոյատևելու անդեմ վարքագիծը գոյապայքարի, մաքառման վերածելով։ Այո՛, «Հայրենիքը կրակե շապիկ է. հագնում ես, այրում է, հանում ես, մեռնում ես» (Վ. Պետրոսյան)։

Եվ որպես արժեհամակարգ ձևավորող ասք՝ մեր դիցասքը ոչ միայն չի զիջում աստվածաշնչյան պատվիրաններին, այլև ավելին է սահմանում՝ դառնալով ուղերձ հոգևոր այն ճանապարհի, որով պիտի անցնի երկիր մոլորակի վրա ապրող հայը (և ոչ միայն)։ Ուստի՝ այն հարկ է ուսումնասիրել որպես հայի Աստվածաշունչ...

Օգտագործված գրականության ցանկ

1. Արթուր Արմին, «Փոքր Միեր», Երևան – Լոս-Անջելես, Ապագա մշակութային միություն, 1996թ.
2. Լևոն Խեչոյան, «Միերի դռան գիրքը», Երևան, Անտարես, 2014թ.
3. «Սասունցի Դավիթ» էպոս, Համահավաք բնագիրը, Երևան, 1990թ.
4. Կոստան Զարյան, «Նավատոմար», 1983թ.
5. Մ. Աբեղյան, «Երկեր», Ը, Երևան, 1985թ